



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՅԻՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
 E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՀԱՄԱՔՈՅԹ
ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

Տարիներու բարի աւանդութիւն է, որ Ս. Յարութեան տօնի վաղորդային, Արեւմտեան մեր Թեմի Ազգային Առաջնորդարանի յարկին տակ տեղի ունենայ զատկական մտերմիկ հանդիպում ու հաւկթախաղ, կազմակերպութեամբ Տիկնանց Օժանդակ Մարմինին:

Այս տարի եւս, հաւաքոյթը տեղի ունեցաւ Զորեքշաբթի, 26 Մարտի կէսօրին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Զարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ:

Տիկնանց Օժանդակ Մարմինը պատրաստած էր սիրոյ սեղան: Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի շուրջ համախմբուած էին հոգեւորականաց դասու, Ազգային Վարչութեան, Տիկնանց Միութեան եւ Ազգ. Առաջնորդարանի անձնակազմի անդամները:

Առաջնորդ Սրբազանին ու հոգեւորականաց դասու անդամներուն միացեալ աղօթքով ու Ս. Յարութեան տօնին նուիրուած շարականներու երգեցողութեամբ կատարուեցաւ Ս. Զատկուան տնօրհնէքի արարողութիւն: Ապա տեղի ունեցաւ հաւկթախաղ:



Ճաշի պահուն, արտասանուեցան սրտի ու գնահատանքի խօսքեր:

Եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ բարձր գնահատեց մեր եկեղեցւոյ ու Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան նուիրեալ ծառայողներուն անձնդիր աշխատանքը եւ մաղթեց, որ մեր ժողովուրդին

հոգեւոր ու ազգային կարիքներուն ի խնդիր օգտաշատ գործը շարունակուի վերանորոգ կորովով ու յանձնառութեամբ:

EASTER CELEBRATION AT THE WESTERN PRELACY

Each year, Prelacy clergy, Executive Council, Ladies Auxiliary, and staff members come together to celebrate Easter with a luncheon organized by the

Ladies Auxiliary. This year's luncheon took place on the afternoon of Wednesday, March 26, at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

The reception began with the blessing of the home service presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and clergy members, followed by the singing of Easter hymns.

During lunch, congratulatory remarks were offered by the attendees. Closing remarks were delivered by the Prelate who highly commended the devotion of all the volunteers to the advancement of the Prelacy's mission and prayed for the work to continue with renewed vigor.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԴՈՐԷ ԱԶԳ. ՖԵՐԱՀԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

Շաբաթ, 29 Մարտի երեկոյեան, Արարատ Տան «Տօքմեճեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ Ֆերահեան Ազգային վարժարանի տարեկան ճաշկերոյթը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր: Ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ նաեւ Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ՝ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան:

PRELATE TO ATTEND ANNUAL BANQUET OF FERRAHIAN HIGH SCHOOL

The annual banquet of Ferrahian High School will take place on the evening of Friday, March 29th, at Deukmejian Hall of Ararat Home in Mission Hills, under the auspices of the Prelate.

The Prelate will attend the banquet accompanied by Executive Council Vice-Chairman Dr. Hagop Der Megerdichian.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԲԱՅՈՒՄԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ Բանակավայրի Յանձնախումբին նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ, Կիրակի, 30 Մարտի կէսօրին տեղի պիտի ունենայ Հ.Մ.Ը.Մ.Ի Թաքոյա բանակավայրի բացման արարողութիւնը՝ ձեռամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Հօր: Առաջնորդ Սրբազանին պիտի ընկերանան Գերայ. Տ. Միւռն Օ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան: Նախատեսուած է կոկիկ յայտագիր մը, որուն պիտի յաջորդէ հիւրասիրութիւն: Բանակավայրը կը գտնուի Frazier Park-ի մէջ:

PRELATE TO CONDUCT OPENING OF HOMENETMEN CAMP TECUYA

On the afternoon of Sunday, March 30, the Prelate will conduct the official opening of the new Homenetmen campsite, Camp Tecuya in Frazier Park.

The Prelate will be accompanied by Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian. A short program and reception is scheduled to take place after the opening ceremony.

ՔՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՀԱՅ ԿԵՂՐՈՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Նախաձեռնությամբ Հայ Մշակութային Հիմնարկության Քրեսենթա Հովիտի մասնաճիւղին, Կիրակի, 30 Մարտի երեկոյեան ժամը 6:00-ին, տեղի պիտի ունենայ Հայ Կեղրոնի տարեկան ճաշկերոյթը, La Canada Flintridge Country Club սրահին մէջ:

Ձեռնարկէն գոյացած հասոյթը պիտի տրամադրուի կեղրոնի պարտամուրհակի հրկիզման: Ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ Արժ. Տ. Արտակ Քնիյ. Տեմիրճեան որ յանուն Առաջնորդ Սրբազան Հօր պիտի փոխանցէ օրհնութեան խօսքը:

ANNUAL BANQUET OF THE CRESCENTA VALLEY ARMENIAN CULTURAL FOUNDATION

The annual banquet of the Armenian Cultural Foundation Crescenta Valley Chapter will take place on the evening of Sunday, March 30, at La Canada Flintridge Country Club.

Proceeds from the banquet will benefit the mortgage burning of the Crescenta Valley Armenian Center. Rev. Fr. Ardag Demirjian will attend and convey the Prelate's blessings.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԳՆԱՀԱՏԱԳԻՐ ՄԸ ՅՂԵՑ ՖՐԵՉՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Կիրակի, 30 Մարտի յետմիջօրէին, նախաձեռնությամբ Հայ Դատի Ֆրեզնոյի շրջանի յանձնախումբին յատուկ ձեռնարկ մը տեղի պիտի ունենայ Ֆրեզնոյի Հայ Կեղրոնին մէջ, պատուելու համար Ֆրեզնոյի քաղաքապետ Էլըն Օթրին, իբրեւ «Տարուան Մարդը»:

Անցնող ութ տարիներուն, քաղաքապետ Օթրի իր զօրակցութիւնը բերած է Հայկական Յեղասպանութեան ճանաչում ապահովելու աշխատանքին: Ան նաեւ խոստացած է Յեղասպանութեան զոհերուն յուշարձան մը կանգնել քաղաքին մէջ: Ան մեծ ներդրում ունեցած է ֆրեզնո

քաղաքի կրթական ծրագրի յառաջացման, եւ հանրային աշխատանքներու ծիրէն ներս յաւելեալ ապահովութեան միջոցներ որոնելով:

Քաղաքապետին իրագործումները բարձր գնահատելով, Առաջնորդ Սրբազան Յայրը այս առիթով շնորհաւորանքի նամակ մը յղեց եւ իր օրհնութիւնները փոխանցեց անոր:

PRELATE SENDS A CONGRATULATORY LETTER TO FRESNO MAYOR ALAN AUTRY

The Armenian National Committee Central Valley has organized a reception to take place on the afternoon of Sunday, March 30, during which Fresno Mayor the Honorable Alan Autry will be honored as “Man of the Year”.

On this occasion, the Prelate sent a congratulatory letter to Mayor Autry in which he thanked him for his support of the Armenian Cause, specifically his stance on the Armenian Genocide Resolution and his backing of the building of a Genocide Memorial in Fresno. The Prelate also commended his commitment to the welfare and progress of the city of Fresno.

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵՆ» ՄԱՏՐԱՆ ՄԵՋ

Նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Յօր, Ս. Պատարագ պիտի մատուցուի Ազգային Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» մատրան մեջ, Շաբաթ, Ապրիլ 5-ին, երեկոյեան ժամը 6-ին:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ Արժ. Տ. Վազգէն Բնյ. Աթմաճեան:

DIVINE LITURGY AT THE PRELACY CHAPEL

On the evening of Saturday, April 5th, Divine Liturgy will be celebrated at the Prelacy St. Dertad and St. Ashkhen Chapel. The Prelate will preside over the Liturgy which will be celebrated by Rev. Fr. Vazken Atmajian.

Services will begin at 6:00 p.m.